

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԶԵԿՈՒՅՑ**

1. Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման ուղղությամբ 2014 թվականի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ՀՀ համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգման շրջանակներում (կետ 1.5) Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներն ամրագրվել են ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի առաջադրանքում, ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծում, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի նոր գլխավոր հատակագծի մշակման նպատակով կազմված՝ Դիլիջան քաղաքի զարգացման հայեցակարգում, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքային համայնքի գլխավոր հատակագծում, ինչպես նաև ՀՀ Արարատի մարզի Շահումյան, Վերին Դվին, Նորաբաց, Բերքանուշ, Հովտաշատ գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերում, Սայաթ-Նովա, Ջրաշեն, Ավշար գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման առաջադրանքներում, ՀՀ Կոտայքի մարզի Զովունի, Ջրվեժ, Նոր Գեղի գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորաշեն գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերում,

2. Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, նախարարությունն իր իրավասությունների շրջանակներում աջակցել է ՀՀ համայնքներում հուշարձանների վերականգնման (կետ 2.2) և տարածքների բարեկարգման, բնակավայրերի դեգրադացված տարածքների վերակառուցմանն ու բարեկարգմանն ուղղված միջոցառումների իրականացմանը (կետ 2.3), համագործակցում և մասնակցում է լիազոր գերատեսչությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ նրանց կողմից հուշարձանների տարածքների բարեկարգման, բնակավայրերի դեգրադացված տարածքների վերակառուցմանն ու բարեկարգմանն նպատակով մշակվող և իրականացվող ծրագրերին:

3. Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության համաձայն, Երևան քաղաքի կանաչապատման համակարգի վերականգնման և ընդլայնման համար, քաղաքում բարենպաստ, հարմարավետ կենսամիջավայր ստեղծելու նպատակով իրականացվել են մի շարք բնապահպանական նշանակություն ունեցող կանաչապատման միջոցառումներ, որոնց արդյունքում բարեկարգվել են քաղաքում արհեստական լանդշաֆտների վիզուալ, գեղագիտական որակական հատկանիշները: 2014 թվականին Երևանի ծաղկային տարածքների ընդհանուր մակերեսը կազմել է 6.2 հա-ի, մայրաքաղաքը զարդարվել է 2 մլն. 300 հազար ծաղիներով, այդ թվում՝ 40 հազար վարդ և 650 հազար կակաչ: Շառատունկերի ընթացքում Երևանում տնկվել ք շուրջ 5000 գնդաձև ակացիա և 1500 թույա:

- Մոտ 22 կմ որոգման ցանցի ընդլայնման և վերանորոգման շնորհիվ հնարավորություն է ստեղծվել ընդլայնել և պահպանել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները: Մայրաքաղաքի գլխավոր ու երկրորդական փողոցներում, բակերում ու պուրակներում առկա ծառատեսակների կենսունակությունը մեծացնելու ու ձևավորման շնորհիվ գեղեցիկ տեսքն ապահովելու նպատակով բոլոր վարչական շրջաններում

կազմակերպվել են ծառատունկեր, ձևավորվել և սանիտարական էտի են ենթարկվել շուրջ 21000 ծառ:

- Պարտադիր բարեկարգման նորմերի պահպանման շրջանակում մասնավոր սեփականատերերը իրենց աշխատանքային գրասենյակների, գործունեության օբյեկտներին հարակից տարածքներում իրականացրել են տարածքի կանաչապատման, բարեկարգման և խնամքի աշխատանքներ: Վերականգնվել և բարելավվել են Երևան քաղաքի մուտքերը, բարեկարգման ընթացքում են շուրջ 400 բակային տարածքները Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում: Սկսվել են Հայաստանի ամերիկյան համալսարանին հարակից 0.7 հա զբոսայգու վերականգնման աշխատանքները: